ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «10» 11 2025թ N 340Ֆ-Լ

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զբոսաշրջության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Սահմանել՝

1) զբոսաշրջային ռեսուրսների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N1 հավելվածի

2) զբոսաշրջային ռեսուրսների գրանցամատյանի տվյալների բազայի բովանդակությունը՝ համաձայն N2 հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2025 թվականի դեկտեմբերի 1-ից:

Recoverable Signature

X

ԱՐՄԱՆ ԽՈՋՈՅԱՆ

Signed by: KHOJOYAN ARMAN 1507870647

ԱՐՄԱՆ ԽՈՋՈՅԱՆ

Պարտականությունները կատարող

Հավելված N1
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
----ի 2025 թվականի N --Լ հրամանի

ԿԱՐԳ
ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ

1. Զբոսաշրջային ռեսուրսների գրանցամատյանը (այսուհետ՝ գրանցամատյան) վարում է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե):
2. Գրանցամատյանը ձևավորվում է մինչև 2026 թվականի սեպտեմբերի 1-ը:
3. Կոմիտեն գրանցամատյանը վարում է թվային եղանակով, և դրա բովանդակությունը պահպանվում է թվային շտեմարանում:
4. Կոմիտեն պետք է առնվազն տարին մեկ անգամ (ոչ ուշ, քան ընթացիկ տարվա մարտ ամսվա վերջին աշխատանքային օրը) իրականացնի գրանցամատյանի բովանդակության թարմացում:
5. Գրանցամատյանի բովանդակության ձևավորման ու այնուհետ դրա յուրաքանչյուր թարմացման նպատակով իրականացվում են հետևյալ քայլերը՝
   1) Կոմիտեն գրանցամատյանի ձևավորման կամ թարմացման վերջնաժամկետից առնվազն չորս ամիս առաջ իրեն հասանելի տեղեկությունների և սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված մարմինների, կազմակերպությունների և միավորումների հետ քննարկումների հիման վրա կազմում է նշանակալի զբոսաշրջային ռեսուրսների ցանկ.
   2) նշանակալի զբոսաշրջային ռեսուրսների ցանկը կազմելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կոմիտեն դիմում է սույն կարգի 6-րդ կետում նշված պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին ու միավորումներին տեղեկություններ ստանալու նպատակով: Ընդ որում՝ բնության հուշարձանների, պատմության և

նշակույթի անշարժ հուշարձանների մասով Կոմիտեն մատնանշում է այն հուշարձանները, որոնց մասով հայցվում են տեղեկություններ (ըստ Կոմիտեի կողմից կազմված նշանակալի զբոսաշրջային ռեսուրսների ցանկի).

3) Կոմիտեն համապատասխան մարմիններից և անձանցից երեսուն աշխատանքային օրվա ընթացքում հավաքագրում է սույն հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետով հայցվող տեղեկությունները: Ընդ որում, թարմացման դեպքում տեղեկություններ հավաքագրում է միայն նախկինում ներկայացված տեղեկությունների համեմատ փոփոխությունների դեպքում .

4) Կոմիտեն տեղեկությունների ստանալու վերջնաժամկետից երեսուն աշխատանքային օրվա ընթացքում ըստ ոլորտների համակարգում է դրանք ու ներառում գրանցամատյանում: Տվյալները ներառվում են մուտքագրման կամ տվյալների թվային ներմուծման եղանակով.

5) Կոմիտեն գրանցամատյանի ձևավորման կամ թարմացման վերջնաժամկետից առավելագույնը երեսուն աշխատանքային օրվա ընթացքում գրանցամատյանը կամ դրա թարմացված տարբերակը հասանելի է դարձնում հանրությանը www.armenia.travel կայքի միջոցով, և այդ մասին գրավոր ծանուցում է սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված մարմիններին, կազմակերպություններին ու միավորումներին:

6. Գրանցամատյանի վարման գործընթացում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասության շրջանակներում Կոմիտեին տրամադրում են զբոսաշրջային ռեսուրսների մասին հետևյալ տեղեկատվությունը՝

1) շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների բանական օգտագործման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող լիազոր մարմինը՝ Կառավարության կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկում ներառված առանձին բնության հուշարձանների և բնության հատուկ պահպանվող տարածքների մասով: Ընդ որում՝ բնության հուշարձանների մասով տրամադրվում են դրանց անձնագրերում առկա տեղեկությունները (այդ թվում՝ հասցեի վերաբերյալ տեղեկություններ և լուսանկարներ), իսկ բնության հատուկ պահպանվող տարածքների մասով դրանց կառավարման

պլանների հիման վրա տրամադրվում են դրանց ընդհանուր նկարագրությունը, զբոսաշրջային գրավչություն ներկայացնող այլ տեղեկություններ, առանձին գոտիների թույլատրելի օգտագործման, մուտքի ու գործունեության սահմանափակումների, կիրառելիության դեպքում՝ մուտքի թույլատրելի օրերի ու ժամերի մասին.

2) մշակույթի զարգացման, մշակութային ժառանգության պահպանության, պաշտպանության, ուսումնասիրության, օգտագործման, հանրահռչակման, հասարակության կողմից մշակույթի՝ որպես զարգացման միջոցի գիտակցման, նոր արժեքների ու նոր գաղափարների ներդրման, հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրման ու զարգացման համար պայմանների ստեղծման, մշակութային արժեքներին հաղորդակցվելու, մշակույթի բնագավառում ազատ ու մատչելի ծառայությունների մատուցման պայմանների ապահովման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող լիազոր մարմինը՝ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին պատմական ակնարկ, առկայության դեպքում՝ լուսանկարներ ու հասցե, կիրառելիության դեպքում՝ մուտքի թույլատրելի օրերի ու ժամերի մասին տեղեկություններ.

3) սույն հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետով նշված մարմինը, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող լիազոր մարմինը, Երևանի քաղաքապետարանը ու տեղական ինքնակառավարման մարմինները՝ վերջիններիս ենթակայությամբ գործող թանգարանների, թատրոնների և այլ մշակութային օբյեկտների ցանկեր, աշխատանքային ժամեր, առկայության դեպքում՝ կայքէջ.

4) սույն հավելվածի 6-րդ կետի 3-րդ ենթակետով նշված մարմինները՝ վերջիններիս կողմից կամ աջակցությամբ կազմակերպվող փառատոների ու տոնակատարությունների ցանկ, դրանց նկարագրություն ու անցկացման վայրի ու ժամանակահատվածի մասին տեղեկություններ.

5) զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպություններից, զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միավորումներից՝ նշանակալի զբոսաշրջային ռեսուրսների մասին տեղեկատվություն:

7. Գրանցամատյանում ներառվող տեղեկությունների տնօրինող են համարվում՝

1) սույն հավելվածի 6-րդ կետի 1-4-րդ ենթակետերով սահմանված տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմինները՝ յուրաքանչյուրն իր կողմից տրամադրվող տեղեկությունների մասով.

2) Կոմիտեն՝ սույն հավելվածի 6-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված աղբյուրներից ստացված տեղեկությունների մասով:

8. Կոմիտեն սույն կարգի 6-րդ կետում նշված պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից և միավորումներից համապատասխան տեղեկությունները ստանում է թվային եղանակով:

9. Գրանցամատյանում բացառիկ գույքային իրավունքների օբյեկտներ ներառելու պարագայում Կոմիտեն առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 1134-րդ հոդվածի 4-րդ մասով:

10. Գրանցամատյանի ստեղծումը, գրանցամատյանի ու կայքի սպասարկումը իրականացնող անձանց Կոմիտեն պետք է առաջադրի ապահովել դրանց համապատասխանությունը «ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 27001-2025. Տեղեկատվական անվտանգություն, կիբեռանվտանգություն և գաղտնիության պաշտպանություն. Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգեր» ազգային ստանդարտին, ինչպես նաև պետք է առաջադրի ապահովել դրանց համապատասխանությունը հետևյալ պահանջներին՝

1) հուսալիություն.

2) ընդլայնման հնարավորություն.

3) համատեղելիություն.

4) սպասարկման հնարավորություն.

5) արագ գործունեություն.

6) մատչելիություն.

7) հասանելիություն:

11. Գրանցամատյանի ու կայքի մասով Կոմիտեն՝

1) ինքնաշխատ համակարգի միջոցով իրականացնում է գրանցամատյանի և կայքի մշտադիտարկում, ներառյալ՝ դրանց հասանելիության խաթարման և խնդիրների առաջացման մոնիթորինգ ու միջադեպերի ինքնաշխատ ծանուցում Կոմիտեի նախագահին.

2) ապահովում է կայքի օգտագործման վիճակագրության ենթահամակարգ.

3) գրանցամատյանի մասով ապահովում է տվյալների հենքի յուրաքանչյուր մուտքի ու դրանում յուրաքանչյուր փոփոխության արձանագրում (ներառյալ՝ մուտք գործող կամ փոփոխություն կատարող օգտատիրոջ վավերացումը):

Հավելված N2
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
---- -----ի 2025 թվականի N -----Լ հրամանի

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Զբոսաշրջային ռեսուրսների գրանցամատյանում (այսուհետ՝ գրանցամատյան) պարտադիր ներառվում են «Զբոսաշրջության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին համապատասխան հայտարարված զբոսաշրջային կենտրոնների և զբոսաշրջային գյուղերի նշանակալի զբոսաշրջային ռեսուրսները:
2. Կոմիտեն գրանցամատյանում ներառում է նաև սույն հավելվածի 1-ին կետով սահմանված զբոսաշրջային կենտրոններից կամ զբոսաշրջային գյուղերից դուրս այլ բնակավայրերի զբոսաշրջային ռեսուրսները:
3. Գրանցամատյանի բովանդակությունը տեսակավորվում է առնվազն ըստ հետևյալ կատեգորիաների՝
   1) բնության հուշարձաններ ու տեսարժան վայրեր (որոնք իրենց հերթին Կոմիտեի կողմից կարող են տեսակավորվել ըստ ենթակատեգորիաների, օրինակ՝ բնության հատուկ պահպանվող տարածքներ, ջրվեժներ, բնական կամուրջներ, լճեր, թերակղզիներ, և այլն).
   2) պատմամշակութային հուշարձաններ (որոնք իրենց հերթին Կոմիտեի կողմից կարող են տեսակավորվել ըստ ենթակատեգորիաների, օրինակ՝ եկեղեցիներ, բերդեր, դամբարաններ, վիշապաքարեր, և այլն).
   3) մշակութային վայրեր (որոնք իրենց հերթին Կոմիտեի կողմից կարող են տեսակավորվել ըստ ենթակատեգորիաների, օրինակ՝ թանգարաններ, թատրոններ, և այլն).
   4) զբաղմունքներ (որոնք իրենց հերթին Կոմիտեի կողմից կարող են տեսակավորվել ըստ ենթակատեգորիաների, օրինակ՝ էքստրեմալ զբոսաշրջություն, գաստրոնոմիկ զբոսաշրջություն և այլն).

5) միջոցառումներ (որոնք իրենց հերթին Կոմիտեի կողմից կարող են տեսակավորվել ըստ ենթակատեգորիաների, օրինակ՝ փառատոներ, տոնակատարություններ, ՄԱՅՍ (MICE - Meetings, Incentives, Conferences, Exhibitions) միջոցառումներ և այլն):

4. Գրանցամատյանի բովանդակությունը Կոմիտեն հայերենով և առնվազն անգլերենով, ռուսերենով, ֆրանսերենով և գերմաներենով հասանելի է դարձնում հանրությանը www.armenia.travel ինտերնետային կայքի (այսուհետ՝ «կայք») միջոցով: Գրանցամատյանում ներառված զբոսաշրջային ռեսուրսները կարող են ներկայացվել ոչ միայն առանձին-առանձին, այլ նաև լրացուցիչ ներկայացնել որպես զբոսաշրջային կենտրոնի մաս:

5. Յուրաքանչյուր ռեսուրսի մասով գրանցամատյանում ներառվում են հետևյալ տեղեկությունները՝

   1) անվանումը.

   2) նկարագրությունը (որը պետք է հնարավորինս պարզ կերպով ներկայացնի էական տեղեկությունները ռեսուրսի մասով ու ներկայացնի դրա գրավչության պատճառները).

   3) տվյալների աղբյուրը և տվյալների տնօրինողը.

   4) ռեսուրսի դասակարգումը (կատեգորիան և ենթակատեգորիան).

   5) առկայության դեպքում՝ լուսանկարներ.

   6) առկայության դեպքում՝ հասցե: